

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻԶԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

2015\_2018թ.

ՎԱՆԱԶՈՐ  
2015

## ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Պատրաստել Հայաստանի Հանրապետության Որակավորումների Ազգային Շրջանակի բակալավրի և մագիստրատուրայի մակարդակներին ու բնութագրիչներին համապատասխան, կրթության որակի ապահովման ՀՀ բարձրագույն կրթության համակարգում տեղի ունեցող գործընթացների և համալսարանում գործող ՈԱ համակարգի շրջանակներում արհեստավարժ, խորը գիտելիքներով և գործնական կարողություններով օժտված, աշխատաշուկայում մրցունակ, ինտելեկտուալ, մշակութային և բարոյական զարգացման բարձր մակարդակ ունեցող ֆիզիկա-մաթեմատիկական, տեխնիկա-տեխնոլոգիական, կիրառական ուղղությունների բարձր որակավորման մասնագետներ, որոնք ի վիճակի են աշխատանքային գործողություն իրականացնելու գիտության, տնտեսության, տեխնիկայի, տեխնոլոգիաների բնագավառներում կազմակերպելու և իրագործելու տեսական ու կիրառական մաթեմատիկական, ֆիզիկական հետազոտություններ, փորձարարական, տեխնոլոգիական, գիտատեխնիկական և արտադրատեխնիկական բնույթի աշխատանքներ:

## ՏԵՄԼԱԿԱՆԸ

ՎՊՀ-ի ֆիզիկայի ամբիոնի տեսլականն է՝ ձգտել դառնալու կրթադաստիարակչական, գիտահետազոտական գործունեություն իրականացնող ֆիզիկա-մաթեմատիկական և տեխնիկա-տեխնոլոգիական ուղղությունների, աշխատաշուկայի պահանջներին բավարարող բարձրորակ մասնագետներ թողարկող, ժամանակակից գիտահետազոտություններ, ուսումնասիրություններ, մշակումներ կատարող ուսումնագիտական ստորաբաժանում:

### 1. Կրթական գործունեություն

1.1 Ֆիզիկայի, կիրառական մաթեմատիկայի, կիրառական տեխնիկական ֆիզիկայի ոլորտների մրցունակ աշխատաշուկայում պահանջարկ ունեցող, մրցունակ, պրակտիկ մասնագետների պատրաստման բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի մշակում և ներկայացում:

- 1.2 Ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկատեխնոլոգիական, ճարտարագիտական և բնագիտական մասնագիտությունների ֆիզիկա առարկայի իմացության կարևորում և ուսանողների կողմից նրա դերի ու նշանակության ընկալումի և մասնագիտության նկատմամբ պատասխանատվության գիտակցության ձևավորում:
- 1.3 Ուսանողների հիմնարար կրթության և գիտելիքների ապահովում ֆիզիկայից, որոնք անհրաժեշտ են ոչ միայն մասնագիտական խնդիրների լուծման համար, այլև մաթեմատիկայի, կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի, ծրագրավորման, տեխնիկայի և տեխնոլոգիաների, ճարտարագիտության, բնագիտության, քիմիայի, կենսաբանության և բժշկագիտության մասնագիտությունների լիարժեք ուսուցման և տիրապետման համար:
- 1.4 Մասնագիտությունների կրթական ծրագրերի պահանջներին, սովորողների առարկայական պատրաստվածության մակարդակին և նրանց անհատական բնութագրերին համապատասխան դասավանդման, ուսուցման ու գնահատման նորարական արդյունավետ մեթոդների մշակում և ներդրում:
- 1.5 Ուսումնական պարապմունքների, ուսանողների անհատական, ինքնուրույն, ուսումնական և հետազոտական աշխատանքների պլանավորում և կազմակերպման մեթոդների ընտրություն առարկայական ծրագրերին թեմաների բնույթին ու առանձնահատկություններին համապատասխան:
- 1.6 Ուսանողների արտադրական պրակտիկաների արդյունավետ կազմակերպում, ուսանողների կողմից գիտելիքների գործնականում կիրառական ունակությունների և կարողությունների ձևավորում, մասնագիտական աշխատանքի հմտություն և փորձի ռեռք բերում:

## 2. Գիտահետազոտական գործունեություն

- 2.1 Դասախոսների և ուսանողների գիտամեթոդական հետազոտական աշխատանքների հետևողական կատարում ամբիոնի գիտական թեմատիկայի շրջանակներում:
- 2.2 Ակադեմիական հանրության, ՀՀ Բուհերի ֆիզիկայի հարակից ամբիոնների հետազոտական լաբորատորիաների և ֆիզիկամաթեմատիկական ակադեմիական հաստատությունների հետ ամբիոնի գիտամեթոդական համագործակցության ընդլայնում:

- 2.3 Ֆիզիկայի ամբիոնի վարկանիշի և հեղինակության պատշաճ մակարդակի ապահովում և մշտական բարձրացում ակադեմիական հանրության և լայն հասարակության առջև, ինտեգրվելով և մաս կազմելով հանրապետական ու միջազգային ֆիզիկական հետազոտական և կրթական համակարգի:
- 2.4 Ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական կազմի որակավորման բարձրացման, գիտահետազոտական աշխատանքների աջակցման և իրականացման, գիտաժողովներին, սեմինարներին մասնակցության համար հնարավորությունների ստեղծման, դասախոսների մասնագիտական աճին նպաստող միջոցառումների քաղաքականության մշակում և իրականացում:
- 2.5 Սովորողների՝ ըստ մասնագիտական գիտահետազոտական աշխատանքների կազմակերպում և իրականացում ոչ միայն հիմնական կրթական ծրագրերի շրջանակում, այլև ամբիոնի գիտահետազոտական գործունեության ուղղություններով:

### 3. Սոցիալ-դաստրարակչական աշխատանքներ

1. Ուսանողների դաստիարակչական աշխատանք, նոր միջավայրի հետ ծանոթացում և համակերպում:
2. Հայրենասիրության, մարդասիրության, մարդ-քաղաքացու որակների դաստիարակում:
3. Պետականության գաղափարի դաստիարակում:
4. Բարոյական և գեղագիտական դաստիարակություն:
5. Աշխատասիրության դաստիարակում:

### 4. Որակի ապահովման

1. Որակի մշակույթի ձևավորում և դրա ապահովմանն ուղղված որակի ներքին համակարգի կազմավորում և գործառնության նորմավորում:
2. Աշխատաշուկայի պահանջներին համարժեք կրթությամբ մասնագետների պատրաստում :
3. Ուսուցման գործընթացի համակողմանի վերլուծության իրականացում և դրա հիման վրա կրթության որակի գնահատման համակարգի ձևավորում
4. ՈԱ մի շարք ընթացակարգերի կիրառում, որոնք ուղղված են ուսումնական ծրագրերի, դասախոսական կազմի և ուսումնառության ռեսուրսների որակի շարունակական բարելավմանը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

Նպատակ	Խնդիր	Պատասխանատու /կատարող/	Համագործակցություն	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունքը /ցուցիչ/	Սպառնալիքներ, ռիսկեր
<b>Կրթական գործունեություն</b>						
<p>„Ֆիզիկա”, „Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա” մասնագիտությունների կրթական ծրագրերի վերամշակում: Աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան „Կիրառական ֆիզիկա”, „Տեխնիկական ֆիզիկա” մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակում, ներդրում:</p>	<p>1.Որակի ապահովման առաջվոր փորձի ուսումնասիրություն, վերլուծություն և ամփոփում: 2.Գործատուների ներգրավում մասնագիտության կրթական ծրագրերի որակի ապահովման գործընթացում: 3. Ուսանողների և շրջանավարտների ներգրավում կրթական ծրագրերի որակի բարձրացման գործընթացում: 4.Ուսումնամեթոդական փաթեթների վերամշակում, նոր փաթեթների մշակում: 5.Առարկայական նկարագրերի վերամշակում: 6.Մասնագիտական կրթական ծրագրերի մոնիթորինգ ՀՀ ՌԱՇ –ի պահանջներին և ամբիոնի առաքելությանն ու տեսլականին համապատասխանության տեսանկյունից: 7. Համալսարանական</p>	<p>Ամբիոնի վարիչ, դասախոսներ</p>	<p>ՎՊՀ-ի ուսումնական վարչություն, Մաթեմատիկայի և ԻՏՄ ամբիոններ , ԵՊՀ-ի ֆիզիկայի ֆակուլտետ</p>	<p>Ուս. տարվա ընթացքում</p>	<p>1.ՀՀ ՌԱՇ-ի պահանջներին և ՎՊՀ-ի ֆիզիկայի ամբիոնի առաքելությանը, տեսլականին և ռազմավարությանը համապատասխան մշակված և ներդրված ՄԿԾ-ներ: 2.Ներքին և արտաքին շահակիցների կարիքների և աշխատաշուկայի պահանջներին բավարարող բարձրորակ մասնագետների</p>	<p>1.Ուսանողների թվի և նրանց մոտ ուսումնառության մոտիվացիայի նվազում: 2.Համալսարանի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ: 3.Երիտասարդ, խոստումնալից կադրերի պակաս:</p>

	<p>ՄԿԾ-ների վերամշակում և ներդրում:        8. կրթական վերջնարդյունքներին, ուսանողների մոտ մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը միտված դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդների, տեխնոլոգիաների կատարելագործում, արդյունավետության բարձրացում:        9. Ներդրված կրթական ծրագրերի մոնիթորինգ և աուդիտ, ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանում և հաշվառում ՄԿԾ-ների վերամշակման ժամանակ:        10. Ներդրված ՄԿԾ-ների ինքնավերլուծություն ծրագրերի գործողության ժամկետում:        11. Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր մասնագիտական կրթական ծրագրերի մշակում և ներդրում:</p>				պատրաստում:	
<b>Գիտահետազոտական</b>						
<p>1. Ամբիոնի համալրումը երիտասարդ կադրերով:        2. Երիտասարդ կադրերի ներհոսք գիտության ոլորտ</p>	<p>1. Ամբիոնը երիտասարդ , խոստումնալից կադրերով համալրման գործընթացի իրականացում, նրանց մասնագիտական աճի և</p>	<p>Ամբիոնի վարիչ, դասախոսներ</p>	<p>Լենինգրադի Գերցենի անվան մանկավարժական համալսարան, ԵՊՀ-ի ֆիզիկայի ֆակուլտետ</p>	<p>2015-2018 թթ</p>	<p>Ամբիոնը համալրել որակյալ, փորձառու մասնագետ</p>	<p>1. Կրթության ոլորտի ցածր ֆինանսավորումը, կրթական տեխնոլոգիաների</p>

<p>3.Ամբիոնի դասախոսների գիտահետազոտական գործունեության աջակցման, խրախուսման քաղաքականություն և արդյունավետության ապահովում:</p>	<p>կայացման աշխատանքներ, փորձի փոխանակում ամբիոնի առաջատար, փորձառու դասախոսների կողմից</p> <p>2.Ամբիոնի դասախոսների գիտահետազոտական գործունեության խրախուսման քաղաքականություն համալսարանի գիտահետազոտության ռազմավարության շրջանակում:</p> <p>3.Հետազոտական և կրթական գործընթացների փոխկապակցվածության մեխանիզմների արդյունավետ իրականացում: Ուսումնամեթոդական ձեռնարկների, ուղեցույցների մշակում:</p> <p>4.Ուսանողների ներգրավում ամբիոնի գիտահետազոտական աշխատանքների մեջ, ՈւԳԸ կոնֆերանսների կազմակերպում, համատեղ գիտական հոդվածների և զեկուցումների թե գիսների հրապարակում:</p> <p>5.Ամբիոնի գիտամեթոդական սեմինարների կազմակերպում:</p> <p>6.Միջբուհական գիտամեթոդական</p>		<p>և ՎՊՀ-ի հարակից ամբիոններ</p>		<p>ներով և երիտասարդ , խոստումնալից կադրերով:</p>	<p>և կիրառական ժամանակակից գիտահետազոտությունների համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների սահմանափակությունն ոչ համարժեք պայմաններ:</p> <p>2.Դասախոսական աշխատանքի կարիերայի առաջընթացի հեռանկարի բացակայություն և ցածր մոտիվացիա:</p> <p>3.Երիտասարդ, խոստումնալից շրջանավարտների /որոնք կարող էին ապահովել ամբիոնի կադրային ներուժ/ արտահոսքը հանրապետություն ից:</p>
--	--	--	----------------------------------	--	---	--

	սեմինարի կազմակերպում կրթական և տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ բնագիտական առարկաների դասավանդման ընթացքում:					
--	--	--	--	--	--	--

Տիգրիկայի ամբիոնի վարիչ՝

Ս. Փարսադանյան